

**ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԽՈՐՀՐԴԻ
ՆԻՍՏԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ**

Գավառի պետական համալսարանի հեռակա ուսուցման ֆակուլտետի 2015 թվականի հոկտեմբերի 30-ի խորհրդի նիստի

Օրակարգում

1. ՀՈՒՖ 2015 թվականի ուսումնական տարվա 2-րդ կիսամյակի լուծարային շրջանի արդյունքների ներկայացում:
2. 2015 թվականի ուսումնական տարում դասախոսների ուսումնական ծանրաբեռնվածությունների վերաբերյալ հարցը:
3. Ընթացիկ հարցեր:

Նիստին մասնակցում էին խորհրդի բոլոր անդամները:

Լսեցին ՀՈՒՖ 2015 թվականի ուսումնական տարվա 2-րդ կիսամյակի լուծարային շրջանի արդյունքների մասին / զեկուցող՝ Ա. Ե. Համբարձումյան/

Նշվեց, որ հեռակա ուսուցման ֆակուլտետի լուծարային շրջանն անցել է կանոնակարգի համաձայն, և 1-ին լուծարային շրջանում ակադեմիական պարտքերը մարած ուսանողները ներկայացվել են հաջորդ կուրս փոխադրման հրամանի:

Լսեցին– 2016 թվականի ուսումնական տարում դասախոսների ուսումնական ծանրաբեռնվածությունների վերաբերյալ հարցը /զեկուցողներ՝ ամբիոնների վարիչներ և ՀՈՒՖ փոխդեկան/:

Որոշեցին – Մասնագիտությունների առանձնահատկություններից ելնելով՝ աշխատանքային ուսումնական պլանների փոփոխություններն արտացոլել դասախոսների ուսումնական բեռնվածքի մեջ և ներկայացնել հաստատման:

ԳՊՀ Հեռակա ուսուցման ֆակուլտետի խորհրդի նախագահ՝

Ն. Ա. Կուստուզյան

ԳՊՀ Հեռակա ուսուցման ֆակուլտետի խորհրդի քարտուղար՝

Վ. Դ. Խաչատրյան